


№ 25
111



ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Պուշկարիոյ հասարակական 10 ֆրանկ. վեցսուսանայ 5 ֆրանկ. Արսասանականի հասարակական 12 ֆրանկ, վեցսուսանայ 6 ֆր.

ՇԱՐՇՈՒՄ

Նախնի եւ դրամի դրկեր
Խնթարութեան հասցին.

Редакция на вѣстникъ
«Шаржумъ»
Варна.
Redaction du journal
«Charjoun»
Varna (Bulgarie).

*W. 4
Vienne (Autriche)*

ԿԱՆԽԻԿ ՎՃԱՐԵԼԻ
Կրթութեան եւ չեմ տրուի:
Ծանուցում տողը 20 սանրիս է:

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ
ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹ ԶՈՐԵՔՇԱՐԹԻ ԵՒ ՇԱՐՇՈՒՄ ՕՐԵՐԸ

Отговорникъ: Д-ръ Т. Хр. Стояновъ.
А Д В О К А Т Ъ

ԳԻՆ 10 ՍԱՆԹԻՄ

ԱՆԻՐԱԻՆԵՐ

«Մէշվէրէթ» իր վերջին համարին մէջ, կատարել յարձակում մը կրնէ Հ. Շարմիթանի դէմ, սա պատճառով որ Հայաստանի սովատանջներու համար եւրոպայի ուղղած իր սրտաշարժ կոչին մէջ թուրքերն ալ չեն յիշատակուած: «Մէշվէրէթ» սա պարագան քրիստոնէական սկզբունքներուն հակառակ կը գրանայ և հետեւաբար արդարացի կը նկատէ իր կծու քննադատութիւնը:

Արդէն Ահմէտ Րիզաի թերթին գլխաւոր ձգտումը եղած է միշտ թրքական ցեղին լաւ յատուկութիւնները պարզել աշխարհի առջեւ և այնպէս մը ցոյց տալ որ անոնք եւս խեղճ զոհերն են թրքական արդի վայրագ կառավարութեան:

Մենք թրքական ցեղին բարի յատկութիւններուն վրայ միշտ վստահութիւն մը միայն ունինք. և շատ անգամ անոնց գոյութեան մասին իսկ տարակուսելու իրաւունքներ ունենալ կը կարծենք: Եւ արդէն եղբուրթիւնները բաւական պերճախօս չեն:

Թուրքիոյ մէջ գործուած վայրագութիւնները հնա՛րին էր որ մէկ մարդու, մէկ խումբի գործն եղած ըլլային: Թրքական ամբողջ ցեղն էր որ ազգային հանդէսի մը պէս երկար տարիներէ ի վեր սպասուած հրամանին սիրայօժար գործադիրը եղաւ:

Հրեաները Մեսիային կը սպասեն. իսկ թուրքերը այդ համբաւաւոր «քաթիլ ամմի»-ն որ սակայն Մեսիայէն աւելի շուտ հասաւ մեր Հայրենիքը աւերելու: Ինքզինքը այսքան մոլեռանդ և արբիւ կատարութեան անձատուր ընող ցեղ մը մէջ յատկութիւն ունեցած կըլլայ միայն. արի՛ւն թափելու, կողպտելու յատկութիւնը:

Սխալ է ենթադրել թէ թուրքերը եւս Հայաստանի մէջ կըրնան այս պահուստով սովատանջ եղկելներ եղած ըլլալ: Անոնք

մեծով պղտիկով ամէնքն ալ մէյ մէկ «հազար ու մէկ գիշերներ»ու Այի պապաներ են ճոխ հարէմներու գինովութեան մէջ ընկողմանած, ոսկիի և զոհարներու գեղերու վրայ կը գլորին, կեանք կը վարեն:

Հայր Շարմիթանի այդ ամբաստանութիւնը ընողները ուրեմն եւրոպայի գեղին, կապոյտ, կարմիր, սեւ տետրակները աչքէ չեն անցըներ, համոզուելու համար իրաց բուն ճշմարտութեան: Հայաստանի թուրքը պէտք չունի Հ. Շարմիթանի լուսին: Հայուն սակին, եղը, ոչխարը, արօրը, արաւը, սունը տեղը, կեանքը և պատիւը անոր կը վերաբերին և եթէ սովը տասը տարի տեւէ, թրքական պարտա մարմիններուն ճարպը, հայու արեամբ գոյացած, բնաւ չի հալիր: «Մէշվէրէթ» կրնայ ապահով ըլլալ այդ մասին: Կը վստահացնենք զինքը որ թուրք ցեղը գժբախտ չէ. ընդհակառակը երջանիկ է այն զազանին երջանկութեամբ որ սրբը բղբաւելէ ետքը արեւին տակ կը լըլըռուի:

Իժբախտ մը եթէ կայ, ան ալ հայէն շատ, և անկէց աւելի թուրք ազգութիւնն է ամբողջութեանը մէջ ըմբռնուած: Անուանարկին, ապագայ չունեցողին գժբազգութիւնն է այս: «Մէշվէրէթ» իմբակը իբր զարգացած տարր լաւ զգացած է որ այդ ծայրայեղ անիրաւութիւնները ընդ մէջ ընկզմած են թուրքերը կառավարութիւնով, ժողովրդով, ապահով կործանման կը տանին կոր կայսրութիւնը: Աւստի ամբողջ պատասխանատուութիւնը կառավարութեան վրայ բեռցընելով, ազգը, ցեղը իբր գթութեան հրեշտակներ, զոհե՛ր կը ներկայացուի աշխարհի առջեւ, քաղաքակրթութիւնը, բարեխաւութիւնը: Ընդունակ տարր մը: Բայց ոչ ոք կը հաւատայ, ոչ մենք, ոչ ալ աշխարհի մնացորդը ու ամէնուն համոզումը խոր և անայլալ է: Եւ ասոր համար է որ Հայր Շարմիթան «Մէշվէրէթ»-ի հայրենակիցները իբր կարեկցութեան արժանի, իբր մարդ-

կային արարածներ չէ նկատած իր կոչին մէջ, ինչպէս մոռցած է նաեւ նոյն կարեկցութիւնը հրաւիրել Հայաստանի լեռանց զազաններուն վրայ:

Գահիճին և զոհին չէ կարելի կարեկցիլ միանգամայն:

ԳԱՄԵՐ-ԱՐՇԱԻՐ

ՀԱԶԱՐԷՆ ՄԵԿԸ

Արփիար էֆ. Արփիարեան թող խօսի անուանա վրայ ու անուանս բոլորովը՝ որչափ որ կուզէ: Այդ սփոփանքը չեմ զլանար իրեն: Գոթիլը թոթոտին պատմութիւնը իրեն համար ես լաւ սովորած եմ:

Միայն կը բողբոքի իր բաց տեղեկագիրներուն գէմ, ուր անուան կը կցէ յեղ. այս կամ այն կուսակցութեան և անուններու մատնանիշ ընելով աշխարհի այլեւայլ կողմերը: Ես յեղափոխական չեմ՝ արդէն իսկ համոզուած ըլլալով որ իմ ունեցած ուժերս հազիւ թէ ինծի կը բաւեն:

Մինչև հիմա չիստեցայ իր խայտառակ սուտերուն դէմ, այսուհետեւ ալ չեմ խօսիր. և, ինչպէս որ սարիներով անտարբեր զբաւուած եմ ինծի համար գրած համակրական յօդուածներուն Մշակի, Արևելքի, Մասիսի ու Հայրենիքի մէջ մինչև 1895, այսուհետեւ ալ անտարբեր կը գտնուիմ խնդրով միայն իր ջրոտած ըզըզի ճանկընտուքներուն և եզուրի պատուած հնարքներուն:

Միայն բան մը կայ որ կը յիշեցնեմ իրեն: Թող լա՛ւ միտքը պահէ որ երկաթի ձեռքէս իր օձիքը ազատելիք չունի. իսկ հիմա՛ լուծութիւնս կը շարունակեմ, ատ կը բաւէ իրեն, վասն զի եթէ, կայնի թուրքերուն պէս, ստորերկրեայ նկող մըն ալ փորել տայ և երկաթէ կափարիչի մը տակ սլըքտի զողզալով, նորէն պիտի պոռայ, խղճի խայթէն տագնապայտոյ. «non, il est toujours là!» Այո, խղճիդ վրայ եմ պողպատի ճանկերով, պարո՛ն Արփիար:

Մամբրէին համար կը ծամծամէ ու կը ծամծամէ: Ինծի լա՛ւ ծանօթ էր, և ուր ու ծանօթ չէր, իրով ու Բաշլիան էֆէնտիկն սկսելով: Գալով սրտակցութեան ու խորհրդակցութեան, իմ գրեցածս սա է որ Արփիար էֆէնտիկ Բաշլիան էֆէնտիկ Բարիզէն զարձը յաջողեցնելու համար, Բերա, Անգլիական գեսպանտան Գոանը գէմ, և որպէս կան ճաշարանի մը մէջ խորհրդակցեցաւ Մամբրէին հետ, ինձմէ քիչ մը հե-

տուն սեղանի մը առջեւ. ու յաջողեցաւ կամ յաջողեցան. և Բաշլիան էֆէնտիկ Բարիզէն զարձաւ անձեռնմխելի: Այո, Մամբրէն ինծի ծանօթ էր, ու եթէ անծանօթ մը կար, սարսափելի անծանօթ մը՝ որ ձեռքիս մէջ ու ոտքերուս տակն էր օձի պա՛ղ զալարուսներով, և որու աշխատակից էի տարիներով, այդ սարսափելի անծանօթը միայն դուն էիր, Արփիար էֆէնտիկ:

Նոր-Կիսանքիդ մէջ Տօքթ. Թիր-Կաթանի ոտքերուն լեզուբոսեքը ալ օձիքդ ձեռքէս չի կրնար խլել: Գիտցած եղիր, ես ալ զանի խօսեցընել տուած եմ, ու ի հարկին պիտի երգուընցնեմ տիեզերքի առջեւ: Բայց թէ ե՞րբ, ե՞րբ պիտի խօսիմ, ասիկա ինծի կը պահեմ, ու լա՛ւ համոզուէ որ եթէ պոռաս Սպանիոյ ու Ամերիկայի թնդանօթներէն աւելի ուժեղ, իրաւունքս ո՛չ մէկուդ կուտամ:

Հիմա՛ հազարէն մէկը հարցնեմ: Ի՞նչու կը վախնաս Մամբրէի հարցաքննութիւնէն: Հայելիին անդիլի կողմը կայ, այնպէս չէ:

Դե՛հ, փչէ շեփորդ: ՀՐԱՆԻ

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

(ՄԵՐ ՄԱՍՆԱՌՈՐ ԹՂԹԱԿՑԵՆ)

Կ. Պոլիս, 15 Ապրիլ
Քաղաքական հորիզոնին վրայ հետաքրքրական երեւոյթներ կան: Հին խաղը նորէն սկսած է. որովհետեւ այս միջոցին Ռուսիա կը ճնշէ Թուրքիոյ վրայ, Սուլթանը մտերմութիւն կը ցուցնէ Անգլիոյ: Օրակարգը այս է. հակում դէպ Անգլիա: Հիմա թուրքերը կը բեն՝ «Մենք գիտէինք թէ Ռուսիա մեր ոխերիմ հակառակորդն է»: Պոլսոյ անգլիական դեսպան Սըր Ֆիլիբ Բըրրի երկու շաբաթէն կը մեկնի Լոնտոն, ուսկից Հոմ պիտի երթայ դեսպանական պաշտօնով. Պոլսոյ Ռուսական և Գերմանական նախորդ դեսպանները Պ. Պ. Նէլի-տօֆ և Սաուրմա ելլալ Հոմ կը գտնուին: Այս փոփոխութեան պատճառը սա է, կըսեն, թէ չարաւոր քաղաքականութեան տէր մէկը պիտի բերուի Պոլիս, որպէս զի լաւ առաջ տանի անգլիական ազդեցութիւնը: Բայց

ասոր վրայ գեռ հաւատացող մնայած է Անգլիոյ մէջ :

—Մէկ շաբաթ առաջ Պոլսէն մեկնեցաւ կայս. պալատան քարտուղար ձեզմատ պէյ գէյ ի բնութեան պարկ և բացի թանկագին ընծաներէ տարաւ նաև Սուլթանին մէկ անձնական գիրք : Այդ նամակով Սուլթանը շնորհակալութիւն կը յայտնէ Չարին որ Երկիրոս իշխանը կրէտէի ինքնորէն կառավարիչ անուանելու գիտաւորութենէն ետ է կեցեր : Երբ ուս դեսպան Պ. Չինովիէզ լսեց թէ ձեզմատ պէյ այս խնամասով գիրք կը ասանի միասին, խոյն հեռագրեց Ռուսիոյ արտաքին գործերու նախարարութեան և հարցուց թէ ստոյգ է որ Չարը այդպէս յայտարարութիւն մը ըրած է . պատասխանը ժխտական եղաւ և դեսպանին կողմէ ալ պալատ հաղորդուեցաւ այս բան, բայց որովհետեւ ամէն պատրաստութիւն եղած ընդունցած էր, ձեզմատ պէյ ճամբայ հանուեցաւ : Միւս կողմէ Երկիրոս իշխանի անուանումը վերջնական հանգամանք ունի և թուրք հասարակաց կարծիքը հետզհետէ կը պատրաստուի այս բանին : Արդէն հիմակուց գործ չէ մնացած կրէտէի օմի. հրամանատար ձեզմատ փաշաի : Միւս կողմանէ ալ կը լսուի թէ կրէտէի ինքորին վերջնական կարգադրութիւնը Թիսալիոյ պարպուելէն յետոյ տեղի պիտի ուննայ :

—Ռուսիոյ արտաքին գործերու նախարարութեան բերան «նոս» լրագիրը կը գրէ թէ կրէտէի խնդրին պիտի յաջորդէ թուրքիոյ բարենորոգման առաջարկը, որ այս անգամ ստանձնած է ուղղակի Ռուսիա : Ասորէն դեսպանը կը շարունակէ իր գիմումները սուղանքի յետնեալ վճարումները և վերջին գէյգրին առթիւ վրաստած ուսուսպատակներու ըլլալիք հատուցումը ստանալու համար :

—Երկրին երկտական վիճակը շատ մտահոգութիւն կը պատճառէ այս պահուն . գորպան պայքարմին ամսական մը վճարելու համար փոխառութեան ծրագիր մը ներկայացուած էր Սուլթանին, որ մերժեց հասկնալով որ ներկայացուած սեղանաւորական մարմնէն պիտի մերժուին : Ամէն ջանք կը թափուի որ մինչեւ առաջիկայ կիրակի (գուրպան պայքար) մէջ մէկ ամսական տըրուի : Կոր յանձնաժողով մը կազմուեցաւ Սուլթանին նախագահութեամբ որ պիտուէի հաւատարակչութեամբ և երկտական վիճակին բարեփոխման պիտի ջրաղի :

Ազգային շրջանակին մէջ նորութիւն չիկայ . Չատկի երկրորդ օրը պաշտօնական ընդունելութեան առթիւ պատրիարքի և

Ստեփան վաչաի լաւատես յայտարարութիւնները ամէնուն ծիծաղը կը շարժեն հոս . ո՞ր աշխարհին մէջ տեղի ունեցեր են այդ վիճակի բարեփոխումները չենք յիշեր (*) :

—Պոլսեցիք հիմայ հանդէսներով, քարոզներով և ընդունելութիւններով կը զբաղուցուին, որպէսզի ուրիշ պէսքի վրայ չը մտածեն և ասոր միջոցը շատ լազրիտէ Օրմանեան . իր քով գացողներն ալ համոզելու համար բառ չի պակսիր բերնին մէջ :

—Այս շաբաթ 500 ոսկի զբրկուեցաւ Սուլթանի անձնական գանձէն Բարիդի Օմի. դեսպանատան այն 6 հայերուն համար որոնք գիմումը բռն են օմի. գեսպանատան թէ զըջում կը յայտնեն Պոլիս գառնալու համար : Չենք գիտեր թէ ով են այս անձեր, բայց անշուշտ այն բախտ խնդիրներէն են որոնք ազգային շահերը իրենց պարտադրի միջոցը բռն են : Ասոնց պաշտօններ պիտի տրուին Պոլսոյ մէջ գոհացուցիչ ամսականներով և յիշեալ 500 ոսկին իբր ճամբու ծախք զբրկուած է Երմանեան պատրիարք Չատկի երկրորդ օրը պաշտօնական ընդունելութեան առթիւ ասոնց դարձն ակնարկելով յիշեց թէ Կ. Վ. հափառութիւնը կընդունի այն ամէն գիմումները որոնք ուղիղ մտադրութեամբ կը լըն իրեն և «հայրարար» կը ներէ անոնց :

—Այս պահուն Տատեան Տիրան պէյ գարձեալ Երոսպ կը գըրուուի :

—Սուս է Պոլսի լրագրերուն գրած այն լուրը թէ կաթողիսոսը մատանի մը նուիրած է Պատրիարքին : կաթողիսոսը երէցեան Կէ. որդ կպիտակպոսին հետ մատանիի քար մը միայն զբրկուած է պատրիարքին :

—Միտի խնդրին համար դեռ ու է պատասխան չէ եկած դատական նախարարութենէն . մատնուոր տեղեկութիւններ կը հաստատեն թէ կաշխատուի Գաղանձեանը նստեցնել այդ աթոռին վրայ . այս մասին արդէն երկար օրէն զբառ եմ նախորդ թըջութակցութեան մէջ : Պատրիարքըն ալ լուրութեամբ կը քաջալընէ այս վիճակը և օր մը կարծեմ վերջացած գործողութեան մը առջեւ պիտի գտնուինք : Հիմայ, գործերու այս վիճակին մէջ Ստեփան փաշա Չատկի Բ. օրուան ընդունելութեան առթիւ յայտարարեց թէ Սահմանադրութեան վերաքննութեան ծրագիրն ալ մինչեւ մայիս պէտք է աւարտել և կառավարութեան ներկայացնել : Խորհրդածութիւն աւելորդ է այլ եւս :

(*) Կրօն. ժողովի երկու ասենակներուն այս բնուէն երկու թիւններն բազակայութիւնը շատ նշանակալից էր :

ՀԱՅՐԵՆԻՔԻ ՅԻՇԱՍԱԿՆԵՐ

—)(—

Որքան անուշ կուզար Խուլթիկ անուշը մեր հանգուցեալ պատուական բարեկամ Յ. Մ. Տուսուխեանի . «հազար քաղաքի հետ չեմ փոխեր իմ Խուլթիկը կըսէր միշտ, երբ կատակով աննպաստ բան մը խօսէինք այդ գիւղի մասին . ինչպէս որ սըրտով սիրած էր այդ հայրենական գիւղը, գործով ալ կը հաստատէր զայն : Իր խնայած զբառներով երկու յուրի արտեր գնած էր հոն, գիւղին մէջ ու ամէն անգամ, երբ ծանօթ բարեկամներէն մէկը իրեն այցելէր, տեսակ մը հաճոյքով ցոյց կուտար զանոնք՝ սիրական զաւկին վրայ գուրզու բացող հօր մը պէս . «հայրենիքի մէջ հող ունենալը միայն իրական հարստութիւն է» կըսէր միշտ, «պէտք է մեր բոլոր նիւթական ուժը անոր տանք» :

Խուլթիկը, 450 տունէ աւելի բնակիչ ունեցող հայ գիւղ մըն էր, Պիթլիսէն երկու երեք ժամ հեռու : Այս բազմամարդ հայ գիւղին բնակչութեան կէսը գրեթէ Պոլիս պանդխտաւորութեան մէջ էր : Ով որ Բերայի գետաբնակներէն, պարիջրատուններէն, պանդխտներէն պիտի փնտրէր այցելած է, անպատճառ զլիսակաւոր Խուլթիկցի մը տեսած է : Այս բազմաթիւ պանդխտներէն շատերը երկար տարիներ օտարութեան անհամ ու անհաս կեանքին վարժուելով կը մոռնային իրենց սոււնր տեղը, հայր, մայր ևւ նոյն իսկ կին ու զաւակներ : Ու մոռացութեան այդ շար ու գիւղին հետ թշուառութեան ասերիչ ձեւերը կը իրար տակաւ քար ու քանդ ընել պանդխտ Խուլթիկցիի հօրենական տունը, գոր իր գծաբխ կին կամ զաւակներ կը ջանային չէն պահել ու «տուրուարկեցին» մէջ ածով չըլլալ : Անցնինք սակայն այս տխուր երեւոյթներէն նկարագրութիւնը, քանի որ հիմայ, թուրք աւերիչ կատաղարութեան երեսն տեղի տխուր տեսարաններ պարզուած են մեր գծաբխ հայրենիքի մէջ :

Խուլթիկ, այդ ուրախ գիւղը, որ երբեմն զինքն այցելողին հաճոյք ու զմայլում կը պատճառէր, հիմայ յէտին ծայր տխուրութեան ու թախիծի մէջ է : 95 զեկու. ամսոյ բարձրագոյն հրամանով կատարուած ընդհանուր կտորածը այդ գիւղին մէջ ալ իր քսամիլի նախճիրները սփռեց : Նահի ամրոզը քերտերը այդ գիւղի վրայ կը խուժեն, 100է աւելի մարդ սպանելէ ետք, ամրոզը գիւղը կը կողորպտեն : Հայ շինականը մէկ ակընթարթի մէջ կը զրկուի իր ձեռնարկներէն ու գոյքերէն : Գիւղին բոլոր բնակիչները օրերով լեռները կապաստանին՝ անօթի ու անսուաղ : Ու վերջապէս երբ մոյեղին քիւրտերն ու թուրքերը կատարածի ու աւարի ժամանակը լրացած հաշուելով իրենց աւարներով կը վերադառնան որ հայ գիւղերն ամրոզը սուզի ու մահու ուրուական մը կը ներկայեն, լեռն ապաստանող ժողովուրդը սարսափահար ոչխարներէն նման իր աւերակ աները կը գտնայ, հոն թշուառութեան ու զանուրթեան անտանելի լուծին սակ իր սիրելիներէն զանազակ մահը ողբալու :

Ու այդ անտանելի կացութեան մէջ, տակաւին կան ու կը տուկան Խուլթիկայ նման բլրաւոր հայ գիւղեր ու քաղաքներ, որոնք իրենց օրական չոր հացը մտածելէ առաջ, ամենայն հետաքրքրութեամբ օտար

երկիրներէն ու անգութ եւրոպայէն յոյսի ու միւլթարութեան ակնկալութիւններ ունին . այդ ամէն զբոքախոսներէ միակ յոյսը ազգային ճշմարիտ յեղափոխութեան կը կրթնի . այլ եւս հա՞րկ է ուրմի այս մասին զեղեւիլ . ամէն անկեղծ ու ազնիւ հայ առաջին պարտքն է, ի սէր իր արհնակից տարաբախտ ազգակիցներին, ի սէր հայրենիքի ներկայ սըրտածմլիկ ու գծնդակ կացութեան մէկզի վանել ամէն անձնական նկատումներ, ու համերաշխութեամբ գործել Ս. գործի յոսանքովն ու հայրենիքի փրկութեան համար, մանաւանդ ներկայ ճգնաժամին որ երկարահան աւերիչ ծրագրի պակաս մնացածը Հայաստանի մէջ սիրող համասարած սովը կը լրացնէ իր անողոք ճիրաններով : Կիչ մը դիտակցութիւն ու գութ ունենանք մեր թշուառ հայրենիքի ու գծաբխ ազգակիցներէ համար :

ՊԵՏ

ՆԱՄԱԿ ՀԱՅԱՍՏԱՆԷՆ

Երգեկաւ Ե. զիւղ, 20 Փետր.

Գրիչս կտորած է, թուրքերս բըզիկ բզիկ : Երկու կական պատճառներ զիս կը կասեցնեն զժոխքի գործած աւերութեան պատճառ : Կայրապոյն Յեղափոխութիւն մը կը ծագի ամէն անոնց սրտին մէջ որ ներկայ են ևւ աչքի առջեւ կը տեսնեն ժողովրդեան խլամ զաւին մէջ տիրած բացարձակ անիշխանութիւնը, որ ոչ ծայր ունի ևւ ոչ ալ վերջ . ևւ զօրաւորը յաղթանակը կը տանի ընկճելով այնքան անմեղ զոհեր :

Սիրելի ընթերցող, մեր վիճակը շատ անորոշ ևւ ծանր է, այնպէս որ ոչ ցանածնիս մերն է ևւ ոչ ալ քաղածնիս, ամէնքը թուրքին կը պատկանին աս յաղթողինն է կըսէ կառնէ, աս ուժովինն է կըսէ կառնէ : Մենք այս ամէնուն համբերութեամբ խոստացանք հնազանդիլ, միայն թէ զէթ մեղի ազատ թող տան որպէս զի երթանք վաստակիք, ևւ մեր վաստակածին մեծագոյն մասը իրենց տանք ևւ մնացած թախած ու թափփածներն ալ մեզի ման, որպէս զի մեր զաւակները սովատանջ ըլլալէ ազատ ըլլան . այս ալ գործերուն չիքար . ինչ ընել չընել կըսել կարելի «մեր մէջ» բռնութիւն լեցնել . ապա թէ ոչ մէջ մըն ալ կը տեսնես հետեւեալ առաւուն ամէն ինչը գրաւի սակ է . կամ վճարել այն ինչ գուամարը եւ կամ թէ գրաւէն ետ կենալ . չմոռնամ ըսելու թէ այս գրաւի մէջ երբեմն հարսներ, աղջիկներ ալ կը գտնուին : Բարեկենդանի անցեալ օրերը գիւղի եկեղեցին բաւական թուով հաւատացեալներէ բազմութիւն մը կը գտնուէր . պատարագիչ Տէր հայրը բեմէն կը քարոզէր . «Ժողովուրդ, ապաշխարութեան օրերը հասան, ապաշխարեցէք, խոստովանեցէք, սրբուեցէք, որպէս զի Սուրբ Յարութեան աթոռի ըլլաք» ևւ այլն : Գիւղին թուրքերէն մէկ քանին որ գազաուկ մտիկ կընեն եղեր Տէր Հօր ըսածները, յետ աւարտման եկեղեցոյ, կը բռնեն Տէր Հօր օձիքը ըսելով թէ «զուս ժողովուրդը կը զրգուս Սուլթանին դէմ» ևւ կարգ մը զրպարտութիւններ ևւ հայհօյանքներ տեղալով Տէր Հօր գլխին, կը մեկնին «ձեր հախն» կուզանք ըսելով : Խիղճ քահանան շնչասպառ հազիւ կիչայ իր տունը . այս եղբայրութիւնը կայծակի արագութեամբ կը տարածուի գիւղին ամէն կողմերը :

Անցեալ օր շրջակայ գիւղերէն քերտեքը եւ թիւրքերը բազմաթիւ ոչխարներ եւ եզեր քշած տարած էին: Կուր կը տարածուի թէ քերտեքը վերջին յարձակում մը պիտի գործեն հայ գիւղերուն վրայ: ան ու սարսափը ամէն տեղ պատեր է: Ահա այս է հիմակուայ մեր վիճակը:

ՎԱՐԴԷՍ

ԴԵՍ ՈՒ ԴԵՆ

—).—

Գաւրէժէն Կովկասի հայ մամուլին կը հաղորդեն թէ Լիւովա թաղին ընթերցարանին՝ «Արովեան» անունը տրուած է ի պատիւ անմահ Խաչատուր Արովեանի յիշատակին:

Ազգային մշակի մը եղած այս համեստ յարգանքը ցոյց կուտայ թէ հայերս ալ տակաւ պիտի գիտնանք մեր երախտիքի սուրբը հատուցանել անոնց՝ որոնց շատ բան կը պարտի հայութիւնը:

Այս պահուս ծովանկարիչ Այլազարդի որ Մոսկուա կը գտնուի, բազմաթիւ հիւրեր կընդունի որոնք կերթան երեւելի ծովանկարիչը տեսնելու իր հոյակապ աշխարհութեանը մէջ:

Սիւլբերիայէն «Նոր-Պարսի» գրուած թղթակցութիւն մը Իրքութիւնի համար հայ եկեղեցիի մը պէտքը անհրաժեշտ կը նկատէ: Օրէ օր հայերուն թիւը աւելնալու վրայ է, կը գրէ թղթակցիցը, և կը յաւելու թէ՛ ընտանիքներ ալ կը գտնուին:

Անգամ մը որ հայը եկեղեցի շինելու որոշումը տայ, կը դործագրէ: Աւրեմն ապահովագրէ Սիւլբերիոյ հայը իր հայկական եկեղեցիին պիտի ունենայ: Մենք բանիւրուն քարոզիչ մը և քանի մը քահանաներ ունինք զորս այժմէն սիրայօժար իրենց տրամադրութեան տակ կը գնենք:

Տ. Մինաս Զերաշի Մարտիլիոյ մէջ ըրած փայլուն քոնֆերանսին տպաւորութեան տակ, նոյն քաղաքին հայերուն մէջ մտածողներ եղեր են թէ ո՞րքա՞նք:

մէնիսի Տնօրէնը մէկ գիշերուան մէջ այնքան հայանպատու շարժում մը առաջ բերել յաջողած է որքան չէ կրցած «Արովեան» անունը տրուելու: . . . տասն և երեք տարուան մէջ: Ապերախտներ . . .

—Կ. Պոլսէն կը գրեն թէ Օրմանեան Պատրիարքը այնքան զբաղուած է որ բնաւ ժամանակ չունի ոչ թէ միայն օտար գետններուն կամ անոնց թարգմաններուն, ուն այցելելու, այլ մինչև անգամ անոնց տուած այցելութիւնները ընդունելու, իր ժամանակը յատկացուցած ըլլալով հայաստան Պահրի փաշան և նմանները շնորհաւորելու համար ըրած անխոնջ երթեւեկներուն:

—Թուրք կառավարութիւնը որոշեր է ոճրագործներու նկարագիրը չափող նորահնար գործիքէն Պոլիս ալ բերել տալ: Ահա գործիք մը որ . . . գլուխ քերելու ժամանակ չի պիտի գտնայ և որքան ալ բարձր շրջանակներու մէջ ծառայէ, շատ պիտի մաշի:

—Ձատկի աւթիւ մեր և յունաց պատրիարքներուն փոխադարձ այցելութեանց պահուն տեսակցութիւնները շատ սիրալիր եղած են: Մեր Պատրիարքաքանի մէջ, խօսակցութեան ամենէն տաք միջոցին որոշում տրուեր է անանգական թարգման Տ. Չօլագիտէսի հայ-յունարէնի և յոյն-հայերէնի թարգմանած կրօնական աշխատութիւնները ի լոյս ընծայելու: Հայ և յոյն երեւելիներէ բազմաքանակ յանձնաժողով մը պիտի հոգայ տպագրութեան ծախքերը: Պ. Չօլագիտէս իր նստած աթոռին վրայ —Գրիգոր էֆ. Գարակէօզեանի քովիկը—ուրախութեան այլալիւր է, մոռնալով որ եթէ հայ Արքակօնն ալ կազմելի յանձնաժողովէն ըլլայ, ձէտեքու դրքին հրատարակութիւնն ալ «գարաւոր կտակին» ճամբան կրնայ բռնել:

—Տիգրիսէ կը գրեն թէ Պ. Մատուրեան ծանօթ նախնային որ վերջերս իր գործարանը ծայ եց

և որամուրի է, փափագ յայտնելու է Մայր-Աթոռին, Սանատարեան վարժարանի նման հաստատութիւն մը կազմելու: Թէ ո՞ր, յայտնի չէ տակաւին:

—Կովկասի հայ դպրոցները գոց կը մնան գեռ կառավարութեան արտօնած ծրագրին անբաւականութեան պատճառով: Հազարաւոր աշակերտներ փոփոցները կը թափուին, իսկ ունեւոր դասակարգը Ռուսաց դպրոցները կը զրկէ իր զակընները: Եթէ այսպէս երթայ, կը գրէ թղթակցից մը, 30—40 տարիէն Կովկասի հայութեան մէջ հայերէն գիտցող լապտերով պիտի փնտուռի:

—Կովասի մէջ իրենց նախնային գործարանները ծախելու և տառադրութիւնը գեռ կը ճարակի հայ վաճառականներուն մէջ: Ամենքն ալ սակարկութեան մէջ են անգլիական ընկերութիւններու հետ, թէեւ կրուի թէ ուս կառավարութիւնը վերջապէս պիտի արգիլէ օտար հպատակներու այդ կենսական գործին տիրանալ:

—Կիրակի ցորեկ, մայիս 1ի աւթիւ, Վառնաի ընկերվարականները լսարան մը կազմակերպեցին Սլավօֆի սրահին մէջ: Ի մէջ այլոց Պ. Պ. Վ. Տիմիթրով և Տօքթ. Սթօյանով, ծանօթ և տաղանդաւոր փաստաբանները, մէյ մէկ ազգու ատենաբանութիւններ արտասանեցին: Առաջինը ընկերվարական տեսակէտով մայիս 1ի նշանակութիւնը պարզեց: Իսկ Տօքթ. Սթօյանով ռաֆկավարական-ընկերվարական սկզբունքները բացատրեց զանոնց զուգահիշեցնելով ներկայի դրութեանց հետ: Որոտընդոսո ծափահարութիւններով ընդունուեցան երկու կրակոտ ատենախօսութիւններն ալ որոնք արդարեւ բեմական փայլուն կարողութիւն մը կը պարզէին:

—Բարիզի մեր թղթակցիցը կը գրէ թէ Պատր. նախկին փոխ. Տ. Գէորգ Ծ. Վ. Իւթիւճեան, իր հի-

ւանդութիւնը գարմանել տալու համար Բարիզ գացած է ուր կը գտնուի ամսէ մը ի վեր: Նոր կիրակիին՝ յատուկ պատարագ մատուցելէ մատրան մէջ, խօսելով ընտիր քարոզ մը ուսկից շատ գոհ մնացեր են ունկնդիրները: Նոյն օրը Տօքթ. Սթօյանեան սեղան մը տուեր է ի պատիւ Իւթիւճեան վարդապետին, որ, ինչպէս յայտնի է, իր այլ և այլ ծառայութիւններուն ի վարձատրութիւն եպիսկոպոսական վկայագիր ստացած է և մօտերս պիտի մեկնի Ս. Էջմիածին, ուր հրաւիրուած է հայրապետական յատուկ պաշտօնագրով:

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

—).—

Մի անգամ ընդ միշտ վերջ տալու համար այն անհիմն եւ ստայօղ տարածայնութիւններուն, որոնք արձագանգ գտան նաեւ ձեր թերթի նախորդ թիւերէն մէկուն մէջ եւ որոնք ըղիւկով ոչ այնքան մաքուր տղբերներէ իրենց նպատակ ունին անուանարկել տեղւոյս կրթական հաստատութիւնները եւ սեռեւ Պր. Ս. Սապահ-Գիւլեանը, կը փութանք յայտարարել թէ տեղւոյս վարժարանները երբեք այնքան կանոնաւոր վիճակ ունեցած չեն, որքան հիմայ և թէ Պր. Տեսչին պաշտօնավարութեան գոհ են տեղւոյս բոլոր պաշտօնական մարմինները, ինչպէս եւ ամբողջ ժողովուրդը:

Այս բոլոր չարամիջ տարածայնութիւններուն առիթ տուած է ուսուցչուհիի մը եւ եկեղեցւոյ երաժիշտին պաշտօնէ արձակումը. իրողութիւն մը զոր կուզեն շահագործել կարգ մը անձեր իրենց կիրքերուն յագուրդ տալու համար:

Ճշմարտութիւնը վերականգնելու եւ եղելութիւնները իրենց իսկական գոյնովը երեւան բերելու համար, հաճեցէք մեր ներկայ գրութեան անկիւն մը յատկացնել ձեր թերթի մօտակայ թիւերէն մէկուն մէջ:

Ի դիմաց Ռուսոճուքի Ազգ. երկսեռ վարժարաններու Հոգաբարձութեան

Ատենադպիր Ատենապետ թ. Սուբխուան Մ. Տիտիւնեան Ռուսոճուք, 14/26 Ապրիլ 98

—).—

ՎԱՐԳ-ՊԱՏՐԻԿՈՎԻ ԹԵՆՍԱԿԱՐԱՆԸ (16)

Վերջապէս ամառը անցաւ, վերագարձայ Տփլիսի. Գօրօշահանը եւ Բարսեղը գնացել էին. իսկապէս նրանք ինձ նամակ էին գրել եւ այդ նամակը կորել էր հեղեղներէ մէջ: Ես չէի ստացել եւ ինչո՞ւ մասամբ հանգրտացաւ նրանով որ նամակը կորել էր. հաւատացած էի որ եթէ նամակն ստանայի՛ պատիւս եւ խօսքս պահելու համար՝ անպատճառ ընկերներս հետ կը գնայի:

Տփլիսում մի քանի ընկերների հետ տեսնվեցի եւ յայտնեցի որ գնալու եմ Բաթում մասնաւոր գործով զբաղվելու. եթէ կուզեն կարող եմ այն տեղ գնալու շրջանակների մէջ յեղափոխական գաղափարը տարածել:

Ի հարկէ ընկերներս համաձայնվեցին:

Կարծեմ հոկտեմբերին անցայ Բաթում, մի վաճառականի մօտ թղթակցի պաշտօն ստանձնեցի բաւական ձեռնառու պայմաններով. պէտք է սասած որ այդ պայմանների ամենաշահաւոր մասը այդ պարունը չը կատարեց:

Իմ նպատակս էր սեփական աշխատանքով մի փոքրիկ գումար պատրաստել եւ գնալ արտասահման ուսումս շարունակելու, վերադառնալ եւ ամուսնանալ վերեւում յիշված օրիորդի հետ:

Իմ զբաղմունքը թեթեւ էր ու ես բոլորովին ապահով ու անկասկածաբունակ կարողում էի ունենալ եւ երսպական լուրջ գրուածները: Մի երկու ամսվայ ընթերցանութիւնը կրկին ինձ փոխեց, անձնական երջանկութեան հասնելու ձգտումները կամաց կամաց թուլացան: Կամաց կամաց մտայ երկտասարկութեան մէջ, սկսեցի գրական ժողովներ:

վերջը մօտեցայ եւ տաճկահայ տարրին, այնպէս որ նորից հանրային զգացումները երեւան եկան եւ ինձ հրեցին դէպի այն ճանապարհը, որը տանում է դէպի հանրային շահերը պաշտպանելու գործը:

Այդ միջոցին մօտիկ ծանօթացայ Պետրոս Ճէրահեանի հետ, որի մտքին յիշել եմ վերեւում: Այդ պարոնը Լոնտոնում հրատարակուող Հայաստան թերթի գործակալն էր, որի խմբագիրներն էին Ժան Բրուսալի, Յակոբեան եւ Սվազլեան: Այդ պարոնները Հայաստանը տիպաւորական կական միջոցներով ազատելու համար մի քանի միջոցն բուրլ էին ուզում եւ խոստանում էին հինգ տարվայ մէջ ազատել մեր գերի հայրենիքը:

Ի հարկէ ես չէի հաստատում այդ յայտարարութեանը, որովհետեւ լաւ ծանօթ էի ազգերի յեղափոխութեան եւ ազատութեան պատմութիւններին:

հետ եւ լաւ գիտէի որ գրանով ու տիպաւորական ճանապարհով, առանց արիւն թափելու, ոչ մի ազգ չէ ազատվել եւ չի էլ կարող ազատվել:

Մտածում էի որ գուցէ այդ մարդիկը գրամը ուզում են զէնքի պատրաստութիւն անենելու համար, սակայն միշտ լսում էի որ շարունակ քէֆեր են անում փօքր ի շատէ ազգեցիկ անգլիացի հարուստների հետ:

Այդ բոլորը լաւ հասկանալով վրձնեցի մօտենալ Պ. Ճէրահեանին, ուսումնասիրել նրան, թափանցել նրանց գործերի մէջ. եթէ իսկապէս լուրջ գործ ունեն միտնալ եւ գնալ գործելու. իսկ եթէ խաբեքայութիւն կամ աննպատակ գործունեութիւն է գոնէ Բաթումում եւ Կովկասում խանդարել:

(Շարունակելի)

ԲՕԼԻԹԻԳԱ

Մ Ո Ւ Հ Ա Ր Ի Պ Է

Լոնտոն կաղէթալարը՝ կէլէ-
ճէք սոն պահարա գատար Ամէ-
րիգա օրատուարընըն ուսումի
պիր հարէքէթտէ պուլունմայա-

Հալպուքի Ամէրիգատա կէօ-
նիւլիլէրին թօբլանմասը ուէվամ
իթմէքտէ տիր : Հէր պիր վիլա-

Մէշհուր միլեառ սահապըը
Մ. Ասթոր թահթը խարէսինտէ
պուլունան շըմէնաքէք գաթար-

Պիր ճինկօ կաղէթասը՝ շիմ-
տիյէ գատար մուհարէպէ իշիւն
իհտաս օլունան թախրիպ մաքի-

Շիմտիյէ գատար մուհարէպէ
հազգընտա կէլէն հավատիւլէր-
աէն էն մուհիմի Ամէրիգա մօ-

Մ. Մաք Բինլի թուլթա-
ճաղը բօլիթիգասընա սայիր
սէօյլէնմէքտէ տիր քի քոնկրէ-

Նազլիթաթ կէօրէ Բուպա ա-
սըլարընըն իքի սերկէրտէլէրի
մուհիմմաթ վէ սիլահ էլէ կէշիւ-

տիքլէրի կիպի Սպանիա սաքէր-
լէրի իւզքիլինէ հիւճիւմէ պաշ-
լայաճազլար տըր :

Թ Ի Ի Ր Ք Ի Ա

Նէմէն էհալիսի պէյնինտէ զու-
հուր իտէն ըսեանըն սէպէպի օ-
րատա սարի օլան գըթլըզ Լմըշ :

Պու աէհէթլի զըրկընա պիր
մէտար օլմագ իշին Սթանպուլա
իյանէ աշըլմըշ վէ Սուլթան պէօ-

Ալմանիատան վէ Աստրիատան
մատա տիկէր Էվրօբա տէվլէթ-
լէրի պու սըրա կիրիտտէն թիւրք

Պագի կաղէթասընըն պէյա-
նընճա, բրէնս Եորկիտըն կիրի-
տէ վալի նասպ օլտուլը կիւնաէ

Ապրիլ 23տէ Ռուսիա Չարը
օտմ. սէֆիրինի հագուրընա գա-
պուլ իթմիշ տիր. պու մինասի-

Հ Ա Վ Ա Ս Ի Ս Ա Թ

Մ. Մաք Բինլի «Թայպի» կա-
ղէթասը մուլիպիրինէ պէյան
իթմիշ տիր քի շիմտիքի հալաէ

Ամէրիգալը մէշհուր միլեո-
նէն մէրհուլմ ճէյկուլըն զըլը
միս էլէն կուլտ մուհիմմաթ ըսա-

Ուաշինկթընտան Ինկիլթէ-
րա կաղէթալարընա եազըլտը-
լընա կէօրէ, Բուպա էօնիւնտէքի

Ամէրիգան «Թէնօն» հարպ
սէֆիրէսի Սպանիօլ «Կուլտո»
նամ 2,065 թօնօլըզ վարօրը իւ-

անը եազալամը տըր : Իշպու-
վարօրտա Սպանիա սաքէրլէրի
իշիւն եէյէճէք վէ բարա պու-

Թրիէսթէտէն Վիէննա կա-
ղէթալարընա եազըլտըլընա կէօ-
րէ Մ. Սմէրիգա Ֆիումէ թօրբի-

Կէշէն հաթթա Մաք Բինլի
իլէ մէնէրալ Միլի պէյնինտէ՝
Բուպայա պէօյլէք գուլվէթ կէօն-

Մուհարէպէնին էն ճանլը
նօգթասընտա Սպանիանըն աթէշ
քէօմիւրինին թիւքէնէճէլի հիւ-

Տ Ա Խ Լ Ի Թ Է

Կէշէն իազար իրթէսի կիւնի,
պուլկար մէշհուր շահիր Ալէքօ
Քօնսթանթինօֆը գաթլ իթմիշ

Ալտոմիլրօլցի քէօյիւնտէ
Թաշքօ վէ Սքիթօ Մաքալէէթ
խանճը պիրատէրլէրի վէ պուն-

Աննա Սիմօնը գաթլ իթմիշ
օլան օֆիցէր Տէշքօ Պօյշէթ վէ
ղապթիյէ նաշայնիկի նօվէլիշ

Բուաշուք վէ Վառնա պէյ-
նինտէ թէլէֆօն խթթը էհալի
իշիւն աշըլմըշ տըր :

Պուստան էվվէլ մալիյէ վէ
կէօմիլէք միւլֆէթթիշի օլան Մ.
Նիքօլա Թօշքօլ Վառնա կէօմ-

ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐ

ՏՐ. Թ. ԽՐ. ՍԹՕՅԱՆՈՎ և ՎԼԱ.
ՏԻՄԻՐ ՏԻՄԻՐՈՎ՝ որոնք իրենց
իրաւարանական ուսմունքը Ձվի-
ցերիոյ մէջ աւարտած են, հաս-

ՍՐԵԻԵԼԵԱՆ ՄԱՄՈՒԼ
ՀԱՆԴԷՍ ԿԻՍԱՄՍԵԱՅ
Ազգային, գրական եւ քաղաքական
28րդ տարի
Խոնքաղիւ-Տեօրհն
Մ. Մ Ա Մ Ո Ւ Ր Ե Ա Ն

Ճաշակաւոր, տոկուն, ձեւաւոր
կոշիկ շինել տալ ուղղը պէտք է
գրիմէ Պ. Ստեփան Խօրասանճեանի,

ՊՕՐՍԱ

Վառնա 22 Ապրիլ
ՊՈՒՂՏԱՅ
Վակօն, լիպրա 47—51, հէքթօլ.
12—12.60 ֆրանք
Արապա, լիպրա 47—55 հէքթօլ.
11—14.60 ֆրանք

Կը տպագրուին ամէն լեզուէ
այցեառմս, հասցեատմս, նամա-
կազուլիս, հարասնեկան հրաւի-
րագիր, մահազգ, ինչպէս նաև